ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Երուսաղէմի հայ կեանքը լիահունչ են դարձնում մշակութային եւ ուսումնական բազում հաստատութիւններ՝ Ձեռագրատունը, որ Երեւանի Մաշտոցեան մատենադարանից յետոյ երկրորդ խոշոր հայկական հաւաքածուն է, Կիւլպէնկեան մատենադարանը, տպարանը, Էդուարդ եւ Հէլէն Մարտիկեան թանգարանը, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց, Ամմանի Իւզպաշեան-Կիւլպէնկեան ազգային վարժարանները, Եաֆայի եւ Հայֆայի ուրբաթօրեայ դպրոցները եւ, ի հարկէ ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը. այս բոլորը գործում են Պատրիարքարանի հովանու ներքոյ:

Ժառանգաւորացը «Երկրորդական» տիպի վարժարան է, ունի վեց դասարան (Ա-Զ), եւ շրջանաւարտներից լաւագոյնները շարունակում են սովորել Ընծայարանում, ուր եւս չորս տարի ուսանելով աւարտաւոր են ներկայացնում եւ ձեռնադրւում աբեղայ:

Աւելի քան հարիւր յիսուն տարուայ պատմութիւն ունի այս ուսումնական հաստատութիւնը: Հիմնադրուել է 1841ին Ռամլէի Ս. Գէորգ վանքին կից, շուրջ երկու տարի գործելուց յետոյ փոխադրուել է Երուսաղէմ:

Անցեալ դարի կէսերին Զաքարիա Զմիւռնացի Պատրիարքը կառուցել է վարժարանի յարմարաւէտ շէնքը՝ թանգարանի հարեւանութեամբ: Այստեղ մանկավարժական բեղուն գործունէութիւն են ծաւալել Գ. Մուրատեանը, Ե. Դուրեանը, Թ. Գուշակեանը, Բ. Կիւլեսէրեանը, Ն. Ներսոյեանը, Ն. Ծովականը (Պողարեան), Յ. Օշականը, Շ. Պէրպէրեանը եւ ուրիշ նշանաւոր աշխարհիկ ու հոգեւոր գործիչներ: Մասնաւորապէս երաժշտական առարկաներ աւանդել են Բարսեղ Կանաչեանն ու Օհան Տուրեանը:

Վարժարանի սաների ընդհանուր թիւը չորս տասնեակից չի անցնում: Ուսուցանւում են հայոց (գրաբար եւ աշխարհաբար), հրէից լեզուներ, անգլերէն, արաբերէն, գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, իրագիտութիւն, համարողական արուեստ, հաշուապահութիւն, համակարգիչ, հոգեւոր երաժշտութիւն, ձայնամարզութիւն եւ այլն: Իւրաքանչիւր աշակերտ ունի հասարակական պարտականութիւններ. նրանք են հետեւում շէնքի ջեռուցմանը, կատարում քսերոպատճենումներ, կազմակերպում իրենց եւ ընկերների հանգիստը մարմնակրթութեան կամ համերգային սրահներում: Քանի որ դպրոցը գիշերօթիկ է, ճաշարանում եւ սենեակներում հերթապահութիւն է սահմանուած:

Աշակերտների ուժերով տրուող համերգներն ու թատերական ներկայացումները լաւ ընդունելութիւն ունեն քաղաքացիների շրջանում: Առանձնապէս մեծ յաջողութիւն էր սպասում Դ. Դէմիրճեանի «Քաջ Նազարի» բեմադրութեանը, որ տեղի ունեցաւ ընթացիկ տարուայ Յունուարի 8ին եւ որի բեմադրիչը Ընծայարանի Դ. դասարանի ուսանող Գէորգ սարկաւագ Բաբախանեանն էր: Ուշագրաւ էր նաեւ Փետրուարի 20ին կազմակերպուած հոգեւոր երգի երեկոն՝ վարժարանի երգչախմբի եւ Ռումանիայի հոգեւոր ճեմարանի սաների ուժերով: Բարեկամական ջերմ մթնոլորտում անցած համերգը շատ օգտակար էր մասնակիցների համար եւ գեղագիտական մեծ բաւականութիւն պատճառեց ունկնդիրներին:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@